ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 211
3 սեպտեմբերի 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ

Կից ներկայացնում ենք 2018 թվականի օգոստոս ամսվա ընթացքում Ջրառատի համայնքի ղեկավարի կարգադրությունները և որոշումները:

Առդիր 5 էջից

Ջրառատ համայնքի ղեկավար Մ. Գալստյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրառատ, (0231) 60575, jraratgyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 թվականի N 25

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 03-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով 01.08.2018 թ. N 01/07.1/3282-18 գրությունը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Աշխատակազմի քարտուղարի ծածկագիրը՝ (1.2-1), կրտսեր պաշտոնի առաջատար մասնագետներ՝ (3.1-1), (3.1-2), (3.1-3), (3.1-4), (3.1-5), և (3.2-1) պաշտոնների անձնագրերում <<Գիտելիքներ և հմտություններ>> բաժնում <<Իրավական ակտերի մասին>> բառը փոխարինել <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ**

20 18 թ.

գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

6 օգոստոսի **2018թ.** Թիվ 26

# ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Անդրանիկի փողոց 7 նրբանցք թիվ 40 տան բնակիչ Ռոզա Լատիֆի Համանովը (ծնված 17.09. 1972 թվականին) դիմել է ՀՀ Արմավիրի մարզ Ջրառատ գյուղի Անդրանիկի փողոց 7-րդ նրբանցք 40 հասցեում գտնվող ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22.05 1991թվականի թիվ 6 որոշման տրված տնամերձ 0,12 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0,0239 հա. հողամասում կառուցված բնակելի տանը շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք շինությունը կառուցվել է մինչև 15.05.2001թ., հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, <<տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով,<<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Անդրանիկի փողոց 7-րդ նրբանցք 40 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Ռոզա Լատիֆի Համանովը (ծնված 17.09 .1972 թվական) և Արթուր Սարիբեկի Համանովը /ծնվ. 13. 08. 1993թ/գույքային իրավունքները ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0,1439 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք- շինությունների նկատմամբ ( բնակելի տուն 148,10քառ.մ, բնակելի տուն 21,9 քառ.մ.բնակելի անասնաշենք 37,8քառ.մ, բնակելի անասնաշենք 26,8 քառ.մ, բնակելի ծածկոց 20,8 քառ.մ / կառուցված 1993թվականին:

.Բնակելի կառույցը և շենք- շինությունը բավարարում են << ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում [illegible]

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորման ստացած անձի կողմից։

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Ռոզա Լատիֆի Հասանովի( ծնված 17. 09.1972 թվական) , և Արթուր Սարիբեկի Հասանովը ծնված 13.08.1993թ՝ սեփականության իրավունքը սույն որոշման 1 ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի շենք-շինության և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի։

4 .Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշման պահից։

Ջրառատ համայնքապետ՝ Ս.Գալստյան

06. օգոստոսի 2018թվական

Գյուղ Ջրառատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրառատ, (0231) 60575, jraratgyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 27

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի 2018 հունիսի 5-ի թիվ 20 որոշումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի բնակիչ՝ Սպմսոն Մնացականի Տիգրանյանին, հոր՝ Մնացական Սամսոնի Տոնոյանի մահվան կապակցությամբ, հատկացնել դրամական օգնություն 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ**

20 __ թ.

գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

20 օգոստոսի2018թ **ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ** **N 43**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176 -րդ հոդվածի 2 կետի և հիմք ընդունելով Հարություն Սարգսյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարանի համայնքապետի տեղակալ Հարություն Սարգսյանին տրամադրել 7 աշխատանքային օր անվճար արձակուրդ օգոստոսի 20 -ից:
2. Աշխատանքի մեջ համարել օգոստոսի 29-ից:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Ջրառատի համայնքապետ Ս. Գալստյան

2018թվականի օգոստոսի 20-ին
գյուղ Ջրառատ